ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 129
14 մարտ 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 24-Ա որոշումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2019թվականի N 24-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2019թ. փետրվարի 15-ի N 4-Ա որոշումը, <<Բիզնես էքսպերտ>> ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հուլիսի 10-ի բնակելի տան իրական արժեքի վերագնահատման հաշվետվությունը և քաղաքացի Մայրանուշ Հայկի Դանիելյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան,Քոբայր թաղամաս,թիվ 6 հասցեում գտնվող 48,4 քմ մակերեսով բնակելի տունը,2,5քմ մակերեսով սանհանգույցը և 3,5քմ մակերեսով մառանը և դրանց սպասարկման ու պահպանման համար 0,0189 հա մակերեսով հողատարածքը /ծածկագիր՝ 06-004-0049-0017/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան,Քոբայր թաղամաս, թիվ 6 տան բնակիչ Մայրանուշ Հայկի Դանիելյանին 68358 /վաթսունութ հազար երեք հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որից.
ա/ բնակելի տան,սանհանգույցի և մառանի վաճառքի գինը կազմում է 51484,1 /հիսունմեկ հազար չորս հարյուր ութսունչորս դրամ տասն լումա/ ՀՀ դրամ:
բ/ հողամասի վաճառքի գինը կազմում է 16873,9 /տասնվեց հազար ութ հարյուր յոթանասուներեք դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
2.Թումանյանի համայնքապետարանի 900265123175 հաշվարկային հաշվին մուծել 51484,1 /հիսունմեկ հազար չորս հարյուր ութսունչորս դրամ տասն լումա/ ՀՀ դրամ, իսկ 900265123274 հաշվարկային հաշվին՝ 16873,9 /տասնվեց հազար ութ հարյուր յոթանասուներեք դրամ իննսուն լումա / ՀՀ դրամ:
Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
3.Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ ՀայաստանիՀանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Թումանյան,Քոբայր թաղամաս, թիվ 6 հասցեում գտնվող բնակելի տունը հանել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի հաշվեկշռից:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային
ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ